ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1257-Ա « 05 » մարտի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-Ի Հ.723-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

1. Երևանի քաղաքապետի 2024 թվականի փետրվարի 23-ի «Երևանի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների՝ Երևան քաղաքի բյուջեից ֆինանսավորման գործընթացը կանոնակարգելու, վարչական, մանկավարժական և ուսումնաօժանդակ կազմի նվազագույն հաստիքային միավորները և վարձատրության խմբերը հաստատելու մասին» հ.723-Ա որոշման՝

1) վերնագրում «վարչական, մանկավարժական և ուսումնաօժանդակ կազմի» բառերը փոխարինել «վարչատնտեսական, մանկավարժական և ուսումնաօժանդակ կազմի» բառերով.

2) նախաբանը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Ղեկավարվելով Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասով, «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 7-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 29-ի «Պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների վարձատրության խմբերի դասակարգման չափանիշները սահմանելու մասին» N 1485-Ն որոշումը.».

3) 2-րդ կետում՝ «վարչական» բառը փոխարինել «վարչատնտեսական» բառով.

4) հ.1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հ.1 հավելվածի.

5) հ.2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հ.2 հավելվածի:

2. Սույն որոշման հ.2 հավելվածով հաստատված հաստիքային միավորների փոփոխությունները, բացառությամբ մսուրային խմբերի համար սահմանված դրույթների, ուժի մեջ են մտնում 2026 թվականի սեպտեմբերի 1-ից: Մինչև սույն որոշման հ.2 հավելվածով հաստատված հաստիքային միավորների փոփոխությունների ուժի մեջ մտնելը՝ գործում են մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը գործող հաստիքային միավորները:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Երևանի քաղաքապետի տեղակալ Լ. Հովհաննիսյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված 1

Երևանի քաղաքապետի

«05» «03» 2026թ.

N 1257-Ա որոշման

« Հավելված 1

Երևանի քաղաքապետի

«23» «02» 2024թ.

N 723-Ա որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. Ընդհանուր դրույթներ

1) Սույն կանոնակարգով (այսուհետ՝ Կանոնակարգ) կարգավորվում են Երևանի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ հաստատություն)՝ Երևան քաղաքի բյուջեի միջոցներից ֆինանսավորման հետ կապված հարաբերությունները:

2) Երևան քաղաքի բյուջեից հաստատության ֆինանսավորումն իրականացնելու նպատակով յուրաքանչյուր տարվա սկզբին Երևան քաղաքի վարչական շրջանները Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն են ներկայացնում հաստատության տարեկան ֆինանսավորման հաշվարկի համար անհրաժեշտ՝ Կանոնակարգով պահանջվող ելակետային տվյալների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն:

3) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչությունը սույն Կանոնակարգի 2-րդ կետում նշված տեղեկատվության հիման վրա հաշվարկում և/կամ ճշգրտում է ընթացիկ տարվա ֆինանսավորման թիվը և համապատասխան միջոցներ է նախատեսում Երևան քաղաքի հաջորդ տարվա բյուջեում:

2. Տարեկան ֆինանսավորման հաշվարկ

1) Հաստատության տարեկան ֆինանսավորման չափը (այսուհետ՝ ՀՏՖ) որոշվում է հետևյալ բանաձևով՝

ՀՏՖ = ԱԱՖ x 12 + ՊԾ + ՍԳ

որտեղ՝

ԱԱՖ-ն հաստատության անձնակազմի ամսական աշխատավարձի ֆոնդն է,

ՊԾ-ն հաստատության պահպանման տարեկան ծախսերն են,

ՍԳ-ն հաստատության սննդի տարեկան գումարն է:

3. Աշխատավարձի ֆոնդի հաշվարկ

1) Հաստատության անձնակազմի ամսական աշխատավարձի ֆոնդը (ԱԱՖ), որը ներառում է օրենսդրությամբ սահմանված հարկերը և այլ պարտադիր պահումները, հաշվարկվում է Կանոնակարգի հ.2 հավելվածով սահմանված վարչատնտեսական, մանկավարժական և ուսումնաօժանդակ աշխատողների վարձատրության խմբերի մեկ դրույքի համար բազային աշխատավարձի նկատմամբ կիրառելով հետևյալ գործակիցները՝

Վարձատրության խումբը	Կիրառվող գործակիցը
1	1.15
2	1.20
3	1.30
4	1.45
5	1.47
6	1.55
7	1.58
8	2.00

2) Վարձատրության խմբերի մեկ դրույքի դրույքաչափի հաշվարկի համար բազային աշխատավարձը սահմանվում է 104,000.0 (հարյուր չորս հազար) ՀՀ դրամ:

3) Տնօրենի դրույքաչափի հաշվարկման համար 5-8 խումբ ունեցող հաստատությունում կիրառվում է 2.08 գործակիցը, 9 և ավելի խումբ ունեցող հաստատությունում՝ 2.16 գործակիցը:

4) Հաստատության կառուցվածքային առանձնահատկություններից ելնելով՝ համապատասխան ֆինանսական միջոցների առկայության պարագայում հիմնադրի կողմից կարող են նախատեսվել լրացուցիչ հաստիքներ:

4. Պահպանման տարեկան ծախսեր

1) Հաստատության պահպանման տարեկան ծախսերը (**ՊԾ**-ն) ներառում են հետևյալ ծախսատեսակները՝

ա. ***էլեկտրամատակարարման ծախսեր՝*** վերջին երեք տարիների փաստացի միջին սպառումը (կՎտ/ժամ) բազմապատկած գործող սակագնով,

բ. ***բնական գազի մատակարարման և սպասարկման ծախսեր՝*** վերջին երեք տարիների փաստացի միջին սպառումը (խմ) բազմապատկած գործող սակագնով,

գ. ***այլ տիպի ջեռուցման ծախսեր՝*** վերջին երեք տարիների փաստացի միջին ծախսի հիման վրա, իսկ ջեռուցման տեսակի փոփոխության դեպքում՝ համանման հաստատությունների տվյալների հիման վրա,

դ. ***ջրամատակարարման և ջրահեռացման ծախսեր՝*** վերջին երեք տարիների փաստացի միջին սպառումը (խմ) բազմապատկած գործող սակագնով,

ե. ***աղբահանման ծախսեր՝*** «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքով սահմանված տարեկան չափով,

զ. ***կապի ծառայությունների (ներառյալ համացանցը) ծախսեր՝*** տարեկան 240.0 հազ.դրամ,

է. ***տնտեսական ապրանքների և նյութերի ծախսեր՝*** յուրաքանչյուր խմբի համար՝ տարեկան 147,0 հազ. դրամ,

ը. ***գրասենյակային ապրանքների և նյութերի ծախսեր՝*** յուրաքանչյուր խմբի համար՝ տարեկան 27,9 հազ. դրամ,

թ. ***ուսումնամեթոդական և ուսումնադիդակտիկ նյութերի ծախսեր՝*** յուրաքանչյուր գործող՝

- կրտսեր խմբի համար՝ տարեկան 80.0 հազ. դրամ,
- միջին խմբի համար՝ տարեկան 110.0 հազ. դրամ,
- ավագ խմբի համար՝ տարեկան 250.0 հազ. դրամ,

ժ. ***բժշկական ծառայությունների, դեղորայքի և բժշկական նյութերի ծախսեր՝*** յուրաքանչյուր խմբի համար՝ տարեկան 38,7 հազ. դրամ,

ժա. ***համակարգչային ծրագրերի և կայքի սպասարկման ծախսեր՝*** տարեկան 117,0 հազ. դրամ,

ժբ. ***մասնագիտական ծառայությունների ձեռքբերման ծախսեր՝***

- մինչև 5 խումբ ունեցող հաստատությունների համար՝ 130,0 հազ. դրամ,
- 5-10 խումբ ունեցող հաստատությունների համար՝ 150,0 հազ. դրամ,
- 10 և ավելի խումբ ունեցող հաստատությունների համար՝ 180,0 հազ. դրամ,

ժգ. ***գնումների համակարգողի ծառայության ձեռքբերման ծախսեր՝***

- մինչև 5 խումբ ունեցող հաստատությունների համար՝ 105.0 հազ. դրամ,
- 5-10 խումբ ունեցող հաստատությունների համար՝ 125.0 հազ. դրամ,
- 10 և ավելի խումբ ունեցող հաստատությունների համար՝ 150.0 հազ. դրամ,

ժդ. ***այլ ծախսեր՝*** յուրաքանչյուր գործող խմբի համար՝ տարեկան 50.0 հազ. դրամ:

ժե. Հաստիքացուցակում պահակի հաստիքի նախատեսման փոխարեն ընդհանուր ծախսերում կարող է նախատեսվել ***պահակային պահպանության ծառայության ձեռքբերման*** գծով ծախս:

ժզ. Գործող կաթսայատան առկայության դեպքում հնոցապանի հաստիքի փոխարեն ծախսերում կարող է նախատեսվել ***կաթսայատան սպասարկման ծառայության ձեռքբերման*** գծով ծախս:

5. Սննդի ծախսեր և ամսական ֆինանսավորում

1) Հաստատության սննդի տարեկան գումարը (**ՍԳ**-ն) հաշվարկվում է տվյալ տարվա աշխատանքային օրերի քանակի, հաստատության սաների թվի և մեկ երեխայի հաշվով սննդի միջին օրական ծախսի արտադրյալով:

2) Հաստատության ամսական ֆինանսավորման չափը որոշվում է ՀՏՖ-ի կազմի մեջ մտնող՝ աշխատավարձի տարեկան ֆոնդի և պահպանման ծախսերի հանրագումարը (ԱԱՖ*12+ՊԾ) բաժանելով 12-ի և վերջինիս ավելացնելով սաների տվյալ ամսվա փաստացի հաճախելիության հիման վրա հաշվարկված սննդի ծախսը:

3) Հաստատությունների ամսական ֆինանսավորման չափերը կարող են ճշգրտվել՝ հաշվի առնելով տվյալ ժամանակահատվածում հաստատությունների կողմից կատարված փաստացի ծախսերը և առկա ֆինանսական միջոցների ծավալը:»:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Հավելված 2
Երևանի քաղաքապետի
05 03 2026թ.
հ. 1257-Ա որոշման

«Հավելված 2
Երևանի քաղաքապետի
23.02.2024թ.
հ. 723-Ա որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԵՐ

1) Վարչատնտեսական կազմի համար

Հ/հ		Հաստիքային միավորների քանակը՝ կախված խմբերի թվից													Վարձա-տրության խումբը
	Պաշտոնի անվանումը	1 խումբ	2 խումբ	3 խումբ	4 խումբ	5 խումբ	6 խումբ	7 խումբ	8 խումբ	9 խումբ	10 խումբ	11 խումբ	12 խումբ	13 խումբ	
1	տնօրեն	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	**8**
2	մասնաճյուղի/հիմնարկի ղեկավար	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	**8**
3	մեթոդիստ՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալ	-	0.5	0.75	0.75	1	1	1	1	1	1.25	1.25	1.25	1.25	**7**
4	գլխավոր հաշվապահ	0.5	0.5	0.5	0.75	0.75	1	1	1	1	1	1	1	1	**5**
5	տնտեսվար	0.25	0.5	0.5	0.75	0.75	0.75	1	1	1	1	1	1	1	**2**
6	գործավար	0	0	0.5	0.5	0.75	0.75	1	1	1	1	1	1	1	**1**
7	շեֆ խոհարար	-	-	-	-	-	-	-	-	-	1	1	1	1	**3**
8	խոհարար	1	1	1	1	1	1	2	2	2	2	2	2	2	**2**

Հ/h		Հաստիքային միավորների քանակը՝ կախված խմբերի թվից													Վարձա-տրության խումբը
	Պաշտոնի անվանումը	1 խումբ	2 խումբ	3 խումբ	4 խումբ	5 խումբ	6 խումբ	7 խումբ	8 խումբ	9 խումբ	10 խումբ	11 խումբ	12 խումբ	13 խումբ	
9	խոհարարի օգնական	0.5	0.5	0.5	1	1	1	1	1	1	1	1	1	1	**1**
10	լվացարար	0.25	0.5	0.5	0.5	0.5	0.5	1	1	1	1	1	1	1	**1**
11	հավաքարար	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5	1	1	1	1	1.5	1.5	1.5	**1**
12	օժանդակ բանվոր	0.25	0.5	0.5	0.5	0.5	0.5	1	1	1	2	2	2	2	**1**
13	հնոցապան	Ինքնուրույն կենտրոնական ջեռուցում (ջրի, գազի, գոլորշու) ունեցող մանկապարտեզներում ջեռուցման սեզոնում սահմանվում է հնոցապանի հաստիք՝ յուրաքանչյուր հերթափոխի համար մեկ դրույքի հաշվով													**1**
14	փականագործ-էլեկտրամոնտյոր	սառնարանային սարքավորում, էլեկտրասալիկ և այլ էլեկտրական ջեռուցման սարքավորումների առկայության դեպքում 4 և ավելի խումբ ունեցող մանկապարտեզներում (եթե հաստիքներում չի նախատեսված փականագործ-էլեկտրամոնտյորի հաստիք) սահմանվում է 0,5 միավոր փականագործ-էլեկտրամոնտյորի հաստիք													**1**
15	այգեպան	մրգի այգի կամ դեկորատիվ տնկիներ ունեցող 0,5 հա մակերեսից ոչ պակաս դեկորատիվ բուսականությամբ հողամաս ունեցող մանկապարտեզներում սահմանվում է այգեպանի հաստիք՝ 1 միավոր, ինչպես նաև 0,5 հա-ից ավելի յուրաքանչյուր հաջորդ 0,5 հա հողամասի համար՝ ևս 0,5 միավոր													**1**
16	պահակ	պահակի հաստիքը սահմանվում է օրենքով սահմանված կարգով													**1**

2) մանկավարժական կազմի համար.

NN ը/կ		Հաստիքային միավորների քանակը՝ կախված խմբերի թվից													Վարձա-տրության խումբը
	Պաշտոնի անվանումը	1	2	3	4	5	6	7	8	9	10	11 խումբ	12	13	
1	դաստիարակ	1.17	2.34	3.51	4.68	5.85	7.02	8.19	9.36	10.53	11.7	12.87	14.04	15.21	**6**

Հ/h		Հաստիքային միավորների քանակը՝ կախված խմբերի թվից													Վարձա-տրության խումբը
	Պաշտոնի անվանումը	1 խումբ	2 խումբ	3 խումբ	4 խումբ	5 խումբ	6 խումբ	7 խումբ	8 խումբ	9 խումբ	10 խումբ	11 խումբ	12 խումբ	13 խումբ	
2	դաստիարակ (մսուրային խմբեր (վաղ տարիքի առաջին, երկրորդ, կրտսեր տարիքի առաջին խմբեր)	2.34	4.68	7.02	9.36	11.7	14.04	16.38	18.72	21.06	23.4	25.74	28.08	30.42	**6**
3	երաժշտության դաստիարակ (երաժշտական ղեկավար)	0.25	0.5	0.75	1	1.25	1.5	1.75	2	2	2	2.5	2.5	2.5	**6**
4	ֆիզկուլտուրայի հրահանգիչ	0.25	0.25	0.5	0.5	0.75	0.75	1	1	1.5	1.5	2	2	2	**6**
5	մանկավարժահոգեբանական ծառայություն մատուցող մասնագետ (հատուկ մանկավարժ, լոգոպեդ, սոցիալական մանկավարժ, հոգեբան)	1 հաստիքային միավոր, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 15 սանից ավելի յուրաքանչյուր 7 սանի համար՝ ևս 0.5 միավոր:													**6**

3) ուսումնաօժանդակ կազմի համար.

NN ը/կ		Հաստիքային միավորների քանակը՝ կախված խմբերի թվից													Վարձա-տրության խումբը
	Պաշտոնի անվանումը	1 խումբ	2 խումբ	3 խումբ	4 խումբ	5 խումբ	6 խումբ	7 խումբ	8 խումբ	9 խումբ	10 խումբ	11 խումբ	12 խումբ	13 խումբ	
1	բուժքույր	1	1	1	1	1	1	1	1	1.5	1.5	1.5	1.5	1.5	**3**
2	բուժքույր (մսուրային խմբեր)	0.5	0.5	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	**3**

Հ/h		Հաստիքային միավորների քանակը՝ կախված խմբերի թվից													Վարձա-տրության խումբը
	Պաշտոնի անվանումը	1 խումբ	2 խումբ	3 խումբ	4 խումբ	5 խումբ	6 խումբ	7 խումբ	8 խումբ	9 խումբ	10 խումբ	11 խումբ	12 խումբ	13 խումբ	
3	դաստիարակի օգնական	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	**4**
4	դաստիարակի օգնական (մսուրային խմբեր (վաղ տարիքի առաջին, երկրորդ, կրտսեր տարիքի առաջին խմբեր)	2	4	6	8	10	12	14	16	18	20	22	24	26	**4**

»

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ԱՆ ԱՎԻՆՅԱՆ**